ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք. Երևան, 7 Մայիսի, 2012 թվական: Նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ սույն հայտարարությունը հանդիսանում է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) և Եվրոպական խորհրդարանի (ԵԽ) համատեղ աշխատանքի արդյունքը:

ԵԱՀԿ ԽՎ պատվիրակության ղեկավար Ֆրանսուա-Խավիեր դե Դոննեան (Բելգիա) ԵԱՀԿ գրասենյակի ղեկավարի կողմից նշանակվել է որպես հատուկ համակարգող՝ կարճաժամկետ դիտորդների առաքելությունը համակարգելու նպատակով: Վինթերբորնի (Միացյալ Թագավորություն) Բարոնուհի Նիքոլսոնը ղեկավարում է ԵԽԽՎ պատվիրակությունը և Կշիշտոֆ Լիսեկը (Լեհաստան) ղեկավարում է ԵԽ պատվիրակությունը: Ռադմիլա Շեկերինսկան (Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետություն) ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության ղեկավարն է, ժամանել է 2012թ. մարտի 22-ին:

Գնահատումն իրականացվել է՝ որոշելու, ընտրությունների համապատասխանությունը ԵԱՀԿ պարտավորություններին և Եվրոպայի խորհրդի չափանիշներին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը: Նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ սույն հայտարարությունը ներկայացվել է ամբողջ գործընթացի ավարտից առաջ: Ընտրությունների վերջնական գնահատականը, մասամբ, կպայմանավորվի ընտրական գործընթացի մնացած փուլերի իրականացմամբ, մասնավորապես, արդյունքների ամփոփմամբ և հետընտրական հնարավոր դիմումների և բողոքների լուծմամբ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը կհրապարակի ամբողջական վերջնական իր զեկույցը, ներառյալ հնարավոր բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունները, ընտրական գործընթացների ավարտից հետո մոտ ութ շաբաթ անց: ԵԱՀԿ ԽՎ-ն իր զեկույցը կներկայացնի 2012թ. հուլիսի 5-9-ը կայանալիք իր տարեկան նիստում: ԵԽԽՎ-ն կներկայացնի իր զեկույցը մայիսի 25-ին Տիրանայում իր մշտական հանձնաժողովի նիստում: ԵԽ-ն իր զեկույցը կներկայացնի Եվրոպական խորհրդարանի արտաքին գործերի նախարարների հանձնաժողովի հաջորդ ժողովի ժամանակ:

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում 2012թ. մայիսի 6-ի Ազգային Ժողովի ընտրությունները հատկանշվել են մրցակցային, ակտիվ և հիմնականում խաղաղ քարոզարշավի դրսևորմամբ: Միևնույն ժամանակ, քարոզչության վերաբերյալ դրույթների խախտման հետևանքով անհավասար մրցակցային դաշտը, ընտրողների վրա ճնշման դեպքերը և դիմումների ու բողոքների քննության գործընթացներում թերությունները մտահոգությունների տեղիք են տվել: Ընտրություններն անցկացվել են իրավական բարեփոխված դաշտի ներքո և մինչև քվեարկության օրը կազմակերպված են եղել ընդհանուր առմամբ պրոֆեսիոնալ և թափանցիկ եղանակով: Քվեարկության օրը հիմնականում անց է կացվել հանգիստ և խաղաղ պայմաններում, բայց աչքի է ընկել կազմակերպչական բնույթի խնդիրներով և գործընթացին՝ հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից անտեղի միջամտություններով:

Հավաքների, խոսքի և տեղաշարժվելու ազատությունները հիմնականում հարգվել են և թեկնածուները, հիմնականում, հնարավորություն են ունեցել ազատ քարոզչություն իրականացնել:

Կուսակցությունների և հասարակության զգալի մասի ընդհանուր թերահավատությունը ընտրական գործընթացների ամբողջականության հանդեպ մտահոգության լուրջ առիթ է, թեպետ բոլոր շահագրգիռ կողմերը ընդգծել են միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններ անցկացնելու իրենց պատրաստակամությունը:

Ընտրություններն անցկացվել են 2011թ. ընդունված նոր Ընտրական օրենսգրքով: Անկախ որոշ թերություններից, Օրենսգիրքն ընդհանուր առմամբ կայուն իրավական դաշտ է ապահովում ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար: Ընդհանուր առմամբ ընտրությունները կազմակերպվել և անցկացվել են պրոֆեսիոնալ և արդյունավետ կերպով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) և Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները (ԸԸՀ) հիմնականում աշխատել են բաց և թափանցիկ եղանակով, և օրենքով սահմանված բոլոր վերջնաժամկետները պահպանվել են: Բայց և այնպես, այն եղանակը, որով ԿԸՀ-ն անդրադարձել է բողոքներին, խարխլել է արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի հիմքերը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից մշտադիտարկված լրատվամիջոցներն իրականացրել են հիմնական քաղաքական մասնակիցների լայնածավալ լուսաբանում՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս իրենց ձայնն ընտրողներին հասանելի դարձնել: Հանրային հեռարձակողը կուսակցություններին տրամադրել է անվճար և վճարովի եթերաժամանակ Ընտրական օրենսգրքի համաձայն: Սա թերևս բարելավում կարող է համարվել՝ պաշտոնական քարոզարշավին նախորդող ժամանակահատվածի համեմատ: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը չի արձանագրել Օրենսգրքում լրատվամիջոցներին առնչվող դրույթների որևէ խախտում:

Թեկնածուների գրանցման ընթացակարգն ընդհանուր առմամբ ամբողջական է եղել, թեպետ, քաղաքացիության և մշտական բնակության հինգ տարվա պահանջը չի համապատասխանում ԵԱՀԿ պարտավորություններին և Եվրոպայի խորհրդի չափանիշներին: Համամասնական ցուցակների գրանցման ժամանակ գենդերային պահանջները պահպանվել են, սակայն այս քվոտան պահպանելու մեխանիզմ առկա չէր, կին թեկնածուներ ինքնաբացարկ հայտնելու դեպքերում:

Ընտրողների ցուցակների ճշտությունը և ընտրակեղծիքների համար դրանց հավանական չարաշահման հնարավորությունը, որպես մտահոգություն բարձրացվել է մեծ թվով թեկնածուների կողմից՝ ավելացվելով ընտրական գործընթացների նկատմամբ ընդհանուր թերահավատությունը: Մինչ ընտրության օրը ընտրողների ցուցակները հասանելի են եղել հասարակության կողմից ստուգման համար, իսկ իշխանությունները տարբեր միջոցներ են ձեռնարկել դրանց որակը և ճշտությունը վերանայելու և բարելավելու համար: Չնայած ընտրողների գրանցմանն ուղղված բարեփոխված օրենսդրությանը, ընտրողների ցուցակների ճշտության վրա բացասաբար է ազդել տարբեր հաստատությունների միջև տվյալների փոխանակման ոչ բավարար կարգավորվածությունը:

Ընտրական օրենսգրքի քարոզչությանն առնչվող դրույթները երբեմն խախտվել են, մեծամասամբ տեղական իշխանությունների և որոշ կուսակցությունների կողմից: Սա ներառում է դասերի ժամանակ քարոզչական միջոցառումներին ուսուցիչների ներգրավվածությունը, քարոզարշավի ընթացքում կուսակցությունների հետ կապ ունեցող կազմակերպությունների կողմից մարդկանց և համայնքներին նվերներ տալը, և քարոզչական նյութեր փակցնելը դպրոցների և համայնքային նշանակության շենքերին: Դիտարկված այդ դեպքերը նպաստել են ընտրությունների մասնակիցների համար անհավասար մրցակցային դաշտի ձևավորմանը, և ընտրողների վրա ճնշումների դեպքերի հետ միասին հակասում են ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությանը: Սա ընդգծում է բոլոր շահագրգիռների կողմից նոր Ընտրական օրենսգրքի արդար և պատշաճ կիրառման անհրաժեշտությունը:

Նոր Ընտրական օրենսգիրքը խստացրել է քարոզարշավի ֆինանսավորման կանոնները: Այնուամենայնիվ, ԿԸՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության սահմանափակ անկախությունը և քարոզարշավին ուղղված ծախսերի նեղ իրավական սահմանումը դեռևս պետք է հաստատագրել:

Դիմումների և բողոքների համար իրավական դաշտը և այն եղանակը, որով ընտրական հանձնաժողովները և դատարանները քննել են ընտրական վեճերը, հաճախ թողել են շահագրգիռ անձանց առանց իրենց բողոքների արդյունավետ քննության՝ հակասելով ԵԱՀԿ պարտավորություններին: Ընտրական օրենսգիրքը խստորեն սահմանափակում է բողոք ներկայացնելու իրավունքը, և ընտրական իրավունքների վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումները չեն կարող բողոքարկվել վերադաս դատարան:

ԿԸՀ-ն գրանցել է 54 տեղական ՀԿ-ներ, ավելի քան 27,000 դիտորդներով,

ընտրությունները դիտարկելու համար: Ընտրությունների մասնակիցները նշանակել են մեծ թվով վստահված անձանց:

Քվեարկության օրը, ընդհանուր առմամբ, հանգիստ և խաղաղ էր: ԿԸՀ-ն հայտարարել է քվեարկության նախնական արդյունքների 62 տոկոսը: Դիտարկված ընտրական տեղամասերից զգալի մեծ մասում քվեարկության գործընթացը կանոնակարգված և լավ կազմակերպված է եղել: Սակայն, կազմակերպչական խնդիրներ, գործընթացի անհարկի միջամտության և լուրջ խախտումների դեպքեր են դիտարկվել բավական մեծ թվով ընտրական տեղամասերում: Բազմակի քվեարկությունից խուսափելու համար նախատեսված թանաքը նախատեսված արդյուքը չի ունեցել: Դիտարկված ընտրական տեղամասերից մեկ հինգերորդում ձայների հաշվարկը բացասական է գնահատվել՝ ընթացակարգային խնդիրների և առանձին լուրջ խախտումների հետևանքով: Չնայած նկատված ոչ համապատասխան տարածքների և մարդկային կուտակումների, արդյունքների ամփոփման գործընթացը դրական է գնահատվել գրեթե բոլոր ԸԸՀ-ներում:

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Նախապատմություն

2012 թվականի փետրվարի 23-ին Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից նշանակվել են 2012 թվականի մայիսի 6-ի Ազգային Ժողովի ընտրությունները: Ազգային Ժողովի նախորդ ընտրությունները կայացել էին 2007 թվականին, երբ Նախագահ Սարգսյանի ղեկավարած Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) և Բարգավաճ Հայաստան (ԲՀԿ), համապատասխանաբար 63 և 22 պատգամավորական մանդատներով, հանդես եկան որպես իշխող ուժ: Այս երկու կուսակցությունները, Օրինաց երկիր կուսակցության (ՕԵԿ) հետ միասին, ձևավորեցին կառավարությունը: Խորհրդարանական այլ կուսակցություններն են Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) և Ժառանգությունը: Հայ ազգային կոնգրեսը, կոալիցիա, որը ղեկավարում է նախկին Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, արտախորհրդարանական հիմնական ուժն է:

Իրավական դաշտ և ընտրական համակարգ

Սահմանադրությունը երաշխավորում է ժողովրդավարական ընտրությունների համար անհրաժեշտ հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Այնուամենայնիվ, թեկնածուների համար հինգ տարվա քաղաքացիության և մշտական բնակության պահանջը և անկախ կատարած հանցագործության ծանրությունից բոլոր դատապարտյալներին ընտրելու իրավունքից զրկելը նվազեցնում են ընտրության բացարձակ իրավունքի երաշխիքն ու որպես թեկնածու առաջադրվելու իրավունքները և

չեն համապատասխանում միջազգային չափանիշներին:[1]

Նոր Ընտրական օրենսգիրքն ընդունվել է 2011թ. մայիսին: Թեպետ Ընտրական օրենսգիրքն ընդունվել էր ընտրություններից բավական առաջ, բավարար ժամանակ տրամադրելով ծանոթանալու համար, ինչ որ առումով առկա էր իրազեկման պակաս և շահագրգիռ մարմինների կողմից նոր կարգավորումների սխալ մեկնաբանություն:

Ընդհանուր առմամբ, Ընտրական օրենսգիրքը սահմանում է կայուն դաշտ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար: Այնուամենայնիվ, դրա արդար և պատշաճ կիրառումը բոլոր շահագրգիռների կողմից նույնքան կարևոր է, ինչքան ինքը օրենքը: Օրենսգիրքը ներկայացնում է մի շարք կարևոր բարեփոխումներ, որոնցից որոշները հիմնված են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) նախկին հանձնարարականների վրա:[2] Այնուամենայնիվ, մնացել են մի շարք էական թերություններ: Մինչև Օրենսգրքի ընդունումը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն (ԿԸՀ) ընդունել էր մի շարք լրացուցիչ կարգավորումներ:

Ուլորտին առնչվող այլ օրենքներից են ՀՀ օրենքը «Կուսակցությունների մասին» (2002) և «Հավաքների ազատության մասին» նոր ՀՀ օրենքը (2011): «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը և Քրեական օրենսգիրքը փոփոխվել են 2011-ին՝ ավելացնելով հանցագործությունների համար սահմանվող պատժաչափերը, ինչպես նաև սահմանելով նոր հանցագործություններ:[3] Թեպետ զրպարտությունը և կեխծ լուրեր տարածելը 2010թ.-ին ապաքրեականացվել են, զրպարտիչ բնույթի քարոզչական նյութեր տարածելը մնացել է քրեական հանցագործություն:

Խորհրդարանական ընտրություններն անցկացվում են, զուգահեռ խառը ընտրական համակարգով: 131 պատգամավորներից 90-ը ընտրվում են համամասնական ընտրակարգով՝ մեկ համապետական ընտրատարածքից: Պատգամավորական մանդատ ստանալու համար կուսակցությունները պետք է ստանան վավեր ձայների առնվազն հինգ տոկոսը: Դաշինքները պետք է ստանան առնվազն յոթ տոկոս: Մնացած պատգամավորներն ընտրվում են 41 ընտրատարածքներից՝ յուրաքանչյուր

---

1 Տես՝ 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.3 և 7.5 պարբերությունները և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 25-րդ հոդված: Ինչպես նաև, Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) «Ընտրությունների վերաբերյալ լավագույն փորձի» կանոնները սահմանում են, որ համապետական ընտրությունների ժամանակ թեկնածուներից մշտական բնակության ցենզ չպետք է պահանջվի, և դատապարտյալների ընտրության իրավունքները պետք է համապատասխանեն իրենց կատարած հանցագործության ծանրությանը:

2 Ազգային ժողովի խնդրանքով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) հետ համատեղ Ընտրական նոր օրենսգրքի իրավական փորձաքննություն է կատարել, տե՛ս http://www.osce.org/odihr/elections/84269

3 Քրեական օրենսգիրքը չի նախատեսում ընտրարշավի ընթացքում պաշտոնական դիրքի կամ պետական միջոցների չարաշահման համար հատուկ հանցագործություններ:

ընտրատարածքից մեկ պատգամավոր:

Ընտրական գործընթացների կազմակերպում

Ընտրական գործընթացները կազմակերպվել են պրոֆեսիոնալ և պատշաճ կարգով՝ ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգով: Այն ներառում է ԿԸՀ-ն, 41 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները (ԸԸՀ) մեկական յուրաքանչյուր ընտրատարածքի համար և 1,982 տեղամասային ընտրական հանձնաժողովներ (ՏԸՀ): Բոլոր ընտրական հանձնաժողովները բաղկացած են 7 անդամից: Կուսակցությունները, և գրանցված մեկ դաշինքը և թեկնածուները կարող են նշանակել վստահված անձանց:

Նոր Ընտրական օրենսգրքի համաձայն, ԿԸՀ-ն և ԸԸՀ-ներն այլևս չեն նշանակվում կուսակցությունների առաջադրմամբ: ՏԸՀ-ները ժամանակավոր գործող մարմիններ են և ձևավորվել են նախքան ապրիլի 11-ը: ՏԸՀ երկու անդամ նշանակվել են համապատասխան ԸԸՀ-ի կողմից, իսկ յուրաքանչյուր խորհրդարանական կուսակցություն նշանակել է մնացած ՏԸՀ հինգ անդամներից մեկին: Նշանակման գործընթացում այն պահանջը, որ ԿԸՀ և յուրաքանչյուր ԸԸՀ առնվազն երկու անդամը ոչ բավարար ներկայացչություն ունեցող սեռի են, պահպանվել է:

Խորհրդարանում ներկայացված կուսակցությունների ներկայացուցիչները արտահայտել են իրենց վստահությունը ընտրությունների կազմակերպման տեղական մակարդակի նկատմամբ, քանի որ նրանք կարող էին ՏԸՀ անդամներ առաջադրել: ՀԱԿ-ը, որը որպես խորհրդարանից դուրս ուժ չունի ՏԸՀ անդամներ, արտահայտել է իր անվստահությունը:

Մինչև քվեարկության օրը գործընթացը կազմակերպվել է հիմնականում պրոֆեսիոնալ և արդյունավետ կերպով:Կ ԸՀ-ն և ԸԸՀ-ներն աշխատել են բաց և թափանցիկ եղանակով՝ տեղեկատվություն տրամադրելով և իրենց նիստերին մուտք ապահովելով վստահված անձանց, դիտորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների համար: Բոլոր իրավական ժամկետները պահպանվել են: ԿԸՀ և ԸԸՀ որոշումներն ընդունվել են սահմանափակ բաց քննարկումների միջոցով, որոշակիորեն նվազեցնելով դրանց թափանցիկությունը: ԿԸՀ-ն բավարար մանրամասնությամբ պարզաբանել է ընթացակարգային ամենակարևոր հատվածները և ընդունված որոշումները ընտրությունների օրվանից բավական առաջ տեղադրել իր կայքում:

Ընտրատարածքների ձևավորման ընթացքում ԿԸՀ-ն հետևել է օրենքի պահանջին, համաձայն որի մարզում կազմավորված ընտրատարածքներից յուրաքանչյուրում ընտրողների թիվը չպետք է ավելի քան 10 տոկոսով շեղվի մարզի ընտրատարածքի միջին չափից: Նոր դրույթը (Ընտրական օրենսգրքի հոդված 17.2) սահմանում է, որ ընտրատարածքի սահմանները չպետք է հատեն մարզային սահմանները: Արդյունքում, երկու մարզերում ընտրատարածքների ընտրողների թվաքանակը զգալիորեն տարբերվում է ընտրողների միջին թվաքանակից, ինչը որոշ առումով ազդում է

ընտրության հավասարության վրա:[4]

ԿԸՀ-ն հեռուստատեսությամբ ընտրողների իրազեկում է իրականացրել, ինչպես նաև թողարկել է պաստառներ և թռուցիկներ՝ կենտրոնանալով քվեարկության ընթացակարգերի վրա: Այն ամբողջ երկրում կազմակերպել է վերապատրաստումներ ԸԸՀ և ՏԸՀ անդամների մեծ մասի համար. ՏԸՀ վերապատրաստումներն ընդհանուր առմամբ դրական են գնահատվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդների կողմից:

Ընտրողների գրանցում

ՀՀ Ոստիկանության Անձնագրային և Վիզաների վարչությունը (ԱՎՎ) պատասխանատու է ընտրողների համազգային էլեկտրոնային ռեգիստրի մշտական պահպանման համար, որը հիմնված է բնակչության պետական ռեգիստրի վրա և պարբերաբար թարմացվում է: Օրենքով սահմանված ժամկետներում ընտրողների ցուցակները կազմվել են ընտրողների ռեգիստրից ըստ ընտրական տեղամասերի և փակցվել են ընտրական տեղամասերում և տեղադրվել են ԱՎՎ կայքում՝ առաջին անգամ ներբեռնման հնարավորությամբ:[5] Ընտրական օրենսգիրքը նախատեսում է ընտրության օրը ընտրողների գրանցում, ինչը հակասում է ընդունված փորձին:[6]

Պետական կառույցների միջև տեղեկատվության փոխանակությունը բավարար կարգավորված չի եղել:[7] Մտահոգիչ է մնում ընտրություններից երկու օր առաջ, ինչպես նաև ընտրության օրը, ընտրացուցակներում բազմաթիվ մուտքագրումների

---

4 2012թ. Հունվարի 12-ի N6-Ն ԿԸՀ որոշման համաձայն, յուրաքանչյուր ընտրատարածքում գրանցված ընտրողների միջին թվաքանակը կազմել է 60.333 ամբողջ երկրում: Հունվարի 12-ի դրությամբ թիվ 39 ընտրատարածքում գրանցված ընտրողների թիվը կազմել է 46,317 (23 տոկոսի տատանում), միչդեռ թիվ 19, 20 և 21 ընտրատարածքներում՝ գերազանցել է 72.000-ը (ավելի քան 20 տոկոսի): Համաձայն Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) «Ընտրությունների վերաբերյալ լավագույն փորձի» կանոնների (2.2iv), սահմանված նորմայից ընդունելի տատանումը չպետք է լինի 10 տոկոսից ավել և իհարկե չպետք է գերազանցի 15 տոկոսը. Տես՝ http://www.venice.coe.int/docs/2002/CDL-AD(2002)023rev-e.pdf

5 Ի լրումն, որոնման հնարավորությամբ ընտրողների ամբողջական ռեգիստրը հրապարակայնորեն հասանելի է եղել ԿԸՀ կայքում:

6 12.2 հոդվածը ընտրողների գրանցում է նախատեսում «ընտրություններից չորս օր առաջ և ընտրության օր մինչև ընտրության ավարտը»: Եթե ընտրողը, տեխնիկական պատճառներով չի ընդգրկվել ընտրացուցակում, ԱՎՎ տեղեկանքի հիման վրա նա ՏԸՀ-ի կողմից ավելացվում է ցուցակում: 12.3 հոդվածը թույլ է տալիս ընտրողին, անձնական տվյալները ուղղելու համար, դիմել դատարան՝ ներառյալ ընտրության օրը: Դատարանը որոշում կընդունի՝ հանձնարարելով ԱՎՎ-ին համապատասխան փոփոխություն կատարել: Վենետիկյան հանձնաժողովի «Ընտրությունների վերաբերյալ լավագույն փորձի» կանոնների համաձայն (1.2iv), ընտրության օրը ընտրական տեղամասում գրանցում չպետք է կատարվի. Տես՝ http://www.venice.coe.int/docs/2002/CDL-AD(2002)023rev-e.pdf

7 Վենետիկյան հանձնաժողովը և ԵԱՀԿ-ն նախապես առաջարկել էին, որ Հայաստանյան բոլոր համապատասխան իշխանական մարմինները, ամբողջականության մոտեցմանը համապատասխան, ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը շարունակելու իրենց ջանքերը ընտրողների ճշտգրիտ ցուցակ կազմելու համար: Տես՝ http://www.osce.org/odihr/elections/84269

հնարավորությունը: ԱՎՎ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ Ոստիկանությունը ջանքեր է գործադրել ընտրողների ռեգիստրից մահացած քաղաքացիների տվյալները հանելու ուղղությամբ, մինչդեռ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը ժամանակին և պատշաճ ձևով չի տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը: Այդ իսկ պատճառով, մահացած հայտարարված ընտրողները ռեգիստրից հանվել են բարեկամների կամ հարևանների գրավոր հայտարարությունների հիման վրա:

Ապրիլի 28-ին մի խումբ պատգամավորներ վիճարկել են Ընտրական օրենսգրքի այն դրույթների սահմանադրականությունը, որն արգելում է ընտրություններից հետո ընտրողների կողմից ստորագրած ընտրողների ցուցակների հասանելիությունը: Մայիսի 5-ին Սահմանադրական դատարանը հաստատել է դրույթների սահմանադրականությունը և պարզաբանել, որ դրանք չեն բացառում ցուցակների հասանելիությունը՝ անձանց ընտրական իրավունքների պաշտպանության համար:

Ընտրություններից առաջ, կուսակցությունների մեծ մասը, ի հավելումն ընտրական գործընթացների հանդեպ անվստահությանը, մտահոգություն են արտահայտել ընտրողների ռեգիստրի որակի վերաբերյալ: Նրանք պնդել են, որ ռեգիստրում առկա թերությունները, ինպես օրինակ, ուռճացված թվերը, մահացած անձանց առկայությունը և միևնույն հասցեում մեծ թվով անձանց գրանցումը, կարող է շահարկվել ընտրությունների օրը: Նրանք նաև մտահոգություն են արտահայտել արտերկրում ապրողների[8] և 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո մոտ 157,000 գրանցված ընտրողների թվի աճի վերաբերյալ:[9] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները հաստատել են վեց դեպք, երբ քանդված, կամ 1987թ-ի երկրաշարժից վնասված շենքերում դեռևս գրանցված ընտրողների առկայություն:[10]

Ընտրացուցակների ճշտությունը և որակը բարելավելու նպատակով՝ Ոստիկանությունը, տեղական իշխանությունների, կուսակցությունների և տեղական դիտորդների հետ համագործակցությամբ, ձեռնարկել է բազմաթիվ միջոցներ: Ոստիկանությունն իրականացրել է անմիջապես տներում ստուգումներ, ստեղծել է «թեժ գիծ» և ԿԸՀ-ի հետ համատեղ, լրատվամիջոցներով իրականացրել է ընտրողների համար տեղեկատվական արշավ: Ընտրության օրից առաջ գրանցված են եղել 2,484,003

---

8 Հայաստանի քաղաքացիներն, անկախ իրենց բնակության վայրից, կարող են քվեարկել համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ: Օրենքի համաձայն, Հայաստանի այն քաղաքացիները, ովքեր ապրում են արտերկրում և չեն գրանցվել Հայաստանյան դեսպանատան կամ հյուպատոսարանի կողմից, մնում են ընդգրկված Հայաստանում իրենց գրանցման վայրի ընտրացուցակում: ԱՎՎ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ այս ընտրողներին ընտրացուցակներից հանելու իրավական հիմք չկա:

9 Իշխանությունների հանաձայն, ընտրողների թվի աճը պայմանավորված է այնպիսի հանգամանքներով, ինպիսիք են 18 տարին լրացած քաղաքացիները և քաղաքացիություն ստացած սփյուռքիայերը (2008-ից մոտ 27,000 հոգի):

10 Դիտարկվել են Գյումրիում և Երևանի թիվ 6 ընտրատարածքում:

ընտրողներ:[11]

Ի պատասխան, շահագրգիռ կողմերի՝ մեծ թվով նոր անձնագրեր թողարկված լինելու մտահոգության վերաբերյալ, ԱՎՎ-ն նշել է, որ 2011-2012 թվականների ընթացքում նոր թողարկված անձնագրերի թվի աճը հիմնականում պայմանավորված է եղել նախկին անձնագրերի փոխարինումով:[12]

Թեկնածուների գրանցում

Թեկնածուների գրանցման գործընթացը համապարփակ է եղել: Ընտրությունների համամասնական ընտրակարգով բաղադրիչի համար ԿԸՀ-ն գրանցել է բոլոր 9 կուսակցությունների ցուցակները ներկայացված 8 կուսակցությունների և 1կուսակցությունների դաշինքի կողմից, որը կազմում է 1,016 թեկնածու:[13] Սա ընտրողներին տրամադրել է ընտրության լայն հնարավորություն: ԸԸՀ-ները գրանցել են 155 թեկնածուներ 41 ընտրատարածքներում, որոնցից 89 առաջադրվել են 13 կուսակցությունների կողմից և 66 ինքնաառաջադրմամբ: Երկու ինքնաառաջադրված թեկնածուների գրանցումը մերժվել է:[14] Մեծամասնական ընտրակարգի առումով, այլընտրանքը երբեմն սահմանափակվել է՝ թվով ինն ընտրատարածքներում միայն մեկ կամ երկու թեկնածուի գրանցմամբ:[15] Գրանցումից հետո 12 թեկնածու համամասնական ցուցակից և մեծամասնական ընտրակարգով առաջադրված 18 թեկնածու ինքնաբացարկ են հայտնել: Թիվ 21 ընտրատարածքում ինքնաառաջադրված ապրիլի 6-ին ծեծի ենթարկված և դրանից հետո ինքնաբացարկ հայտնած թեկնածուի գործը, իշխանությունների կողմից դեռևս քննվում է:

Հինգ տարվա մշտական բնակության պահանջը, որպես թեկնածու առաջադրվելու իրավունք ունենալը որոշելու համար, հստակորեն կարգավորված չէ: ԿԸՀ-ն չի անդրադարձել այս խնդրին, ինչը հանգեցրել է այս առումով թեկնածուների գրանցման

---

11 Այս թիվը ներառում է 238 դիվանագիտական ծառայությունների անձնակազմերը և նրանց ընտանիքների անդամներին, որոնք առաջին անգամ է, որ կարող են քվեարկել համացանցի միջոցով (նախքան մայիսի 6-ը):

12 ԱՎՎ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ 2009-ին տրվել է մոտ 200,000, 2010-ին մոտ 270.000 2011-ին մոտ 398,000 և 2012թ հունվարի 1-ից մինչև ապրիլի 10-ը՝ մոտ 100,000 անձնագիր: Ոստիկանությունը տեղեկացրել է, որ 2011թ. ապրիլից երկարաձգված անձնագրերով քաղաքացիները չեն կարող մուտք գործել Շենգենյան գոտի:

13 ՀՀԿ, ԲՀԿ, ՀՅԴ, ՕԵԿ, Ժառանգություն, Հայաստանի կոմունիստական կուսակցություն (ՀԿԿ), Հայաստանի դեմոկրատական կուսակցություն (ՀԴԿ), Միավորված հայերի կուսակցություն (ՄՀԿ) և ՀԱԿ դաշինքը:

14 Մեկ հավանական թեկնածուի գրանցումը մերժվել է մշտական բնակության հինգ տարվա պահանջը չբավարարելու պատճառով, իսկ երկրորդը չի վճարել ընտրական գրավը:

15 Թիվ 28 և 35 ընտրատարածքներն ունեն միայն մեկ գրանցված թեկնածու: Համապատասխան ընտրաթերթիկներն ունեն երկու ընտրություն (թեկնածուին կողմ կամ դեմ): Ընտրվելու համար թեկնածուն պետք է ստանա ընտրողների ձայների 50 տոկոսից ավելին:

հստակ նորմերի բացակայության:[16]

Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որպեսզի թեկնածուների համամասնական ցուցակները ունենան երկու սեռի ներկայացուցիչներ յուրաքանչյուր հինգ թեկնածուների թվում, սկսած երկրորդ թեկնածուից: Այս քվոտայի պահպանման արդյունավետությունը լիակատար չէ, քանի որ ցուցակի գրանցումից հետո թեկնածուները կարող են ինքնաբացարկ հայտնել և սկզբնական գենդերային համամասնությունը վերականգնելու պահանջ չկա: Բոլոր կուսակցությունները առաջադրել են կանանց՝ օրենքի պահանջին համապատասխան: Նախնական, 235 կին թեկնածու է գրանցվել համամասնական ընտրացուցակում (23 տոկոս), որոնցից 7-ը ինքնաբացարկ են հայտնել: Արդյունքում, կանանց համամասնությունը ՕԵԿ ցուցակում 20 տոկոսից նվազել է: Մեծամասնական ընտրապայքարում գրանցվել էին 12 կին թեկնածու (8 տոկոսից պակաս), որոնցից մեկը ինքնաբացարկ է հայտնել: Թվով 41 ընտրատարածքներից 32-ը չունեն կին թեկնածու:

Քարոզչության միջավայր և քարոզչության ֆինանսավորում

Նախընտրական քարոզչությունը ակտիվ էր, մրցակցային և ընդհանուր առմամբ, խաղաղ: Մրցակցությունը եռանդուն էր բոլոր մասնակիցների, այդ թվում կառավարությունում ներկայիս գործընկերների միջև: Հավաքների, խոսքի և տեղաշարժվելու ազատությունները հիմնականում պահպանվել են: ՀԱԿ թեկնածուների կողմից վիրավորական լեզվի օգտագործման որոշ դեպքեր են արձանագրվել:[17] Եղել է բռնության չորս դեպք տարբեր կուսակցությունների կողմնակիցների միջև:[18] Իշխանությունները բոլոր մասնակիցներին տրամադրել են անվճար տարածքներ պաստառների և քարոզչության համար՝ ինչպես պահանջվում էր Ընտրական օրենսգրքով: Այնուամենայնիվ, մասնակիցները ոչ միշտ են հետևել օրենքին, հատկապես պաստառներ և քարոզչական նյութեր օգտագործելու տեսանկյունից:[19]

---

16 ԿԸՀ-ն կարծիք է հայտնել, որ նա պարտավորված չէր ընդունել նման պարզաբանում: Հինգ հնարավոր թեկնածուներ ԱՎՎ են դիմել հինգ տարվա մշտական բնակության վկայագիր ստանալու համար, բայց մերժվել են, ինչի արդյունքում չեն կարողացել գրանցվել:

17 Այս հայտարարությունները ներառում են, ՀԱԿ թկնածուի կողմից Նախագահ Սարգսյանին որպես «Ֆաշիստական ռեժիմի ֆյուրեր» դիմելը և ՀԱԿ առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունները՝ կոչելով իշխանություններին «քրեական ռեժիմ», որն «ավելի վատն է, քան կոմունիստականը», քանի որ «այն օգտագործում է բանակը՝ սեփական քաղաքացիներին ոչնչացնելու համար»:

18 Բռնության դեպքը տեղի է ունեցել ապրիլի 15-ին և 16-ին Երևանի թիվ 7 ընտրատարածքում, երբ ՀՀԿ կողմնակիցները հարձակում են կատարել ՀԱԿ թեկնածուների և ակտիվիստների վրա, որոնք ՀՀԿ կողմնակիցների կարծիքով վիրավորանք պարունակող քարոզչական նյութեր են տարածել: Ոստիկանությունը և դատախազությունը հետաքննում են նաև Լեռնապատ գյուղում (Լոռվա մարզ) ընդդիմության կողմնակցի, իբրև թե ՀՀԿ-ական գյուղապետի որդու կողմից, դանակահարության դեպքը:

19 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները արձանագրել են ՀՀԿ-ի պաստառներ Լոռվա մարզի հանրային տրանսպորտի վրա և պաստառներ՝ տեղական ինքնակառավարման շենքերի վրա՝ հիմնականում ՀՀԿ-ի, ինչպես նաև ԲՀԿ-ի և ՀՅԴ-ի: Թիվ 3 ընտրատարածքում, որոշ մասնավոր

Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները և դաշինքը ընդգծել են միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններ անցկացնելու իրենց պատրաստակամությունը: Իշխանությունների, ընտրությունների մասնակիցների և քաղաքացիական հասարակության կողմից եղել են բազմաթիվ նախաձեռնություններ, որոնք նպատակ են ունեցել ապահովելու գործընթացների ամբողջականությունը:[20] Միևնույն ժամանակ, քարոզարշավը հատկանշվել է ընտրողների ցուցակների թերությունների, ձայներ գնելու, ընտրակեղծիքները հեշտացնելու նպատակով անձնագրեր թողարկելու և ընտրողներին վախեցնելու վերաբերյալ մեղադրանքներով: Այդ իսկ պատճառով, հասարակական վստահության ցածր մակարդակը ընտրական գործընթացների ամբողջականության վերաբերյալ շարունակում է լուրջ խնդիր մնալ:

Գլխավոր դատախազությունը և Ոստիկանությունը իրենց՝ ընտրական խախտումները արձանագրելու գործողություններում թափանցիկ են եղել: Այնուամենայնիվ, հնարավոր իրավախախտների նկատմամբ ոչ մի պատժամիջոցներ չեն նշանակվել, շատ գործեր կարճվել են, որոշները միայն ակնհայտորեն մակերեսային հետաքննությունից հետո: Երեք դեպքերով Ոստիկանությունը մերժել է քրեական գործի հարուցումը, այն հիմնավորմամբ, որ իրավախախտների քրեական հանցագործություն կատարելը արդարացված է եղել իրենց իսկ ընտրական իրավունքները պաշտպանելով: Նման անգործությունը հակասում է օրենքի գերակայության սահմանադրական սկզբունքին:

Ընտրողների վրա ճնշումները, ինչպես օրինակ, աշխատողներին ՀՀԿ հանրահավաքներին մասնակցել ստիպելը և ընդդիմության հանրահավաքներին մասնակցելուն խոչընդոտելը, մտահոգություն են առաջացրել:[21] Նման գործելաոճը

շենքերի կառավարիչներ բողոքել են ԸԸՀ-ին, որ ԲՀԿ, ՀՅԴ և ՀԱԿ թեկնածուների պաստառները փակցվել են այդ շենքերի վրա առանց իրենց համաձայնության:

20 Դրանք ներառել են Նախագահի և ԿԸՀ նախագահի հրապարակային հայտարարությունները, Խորհրդարանի և գլխավոր դատախազի կողմից ձևավորված աշխատանքային խմբերը, ընտրական խախտումներին հետևելու նպատակով ԲՀԿ, ՀԱԿ և ՀՅԴ կողմից ձևավորված միջկուսակցական շտաբերը, ՀՀԿ-ի կողմից նախաձեռնված վարքագծի կանոնները (միացել են ԲՀԿ-ն, ՀԴԿ-ն, ՕԵԿ-ը, ՀԿԿ-ն), «Թրանսփարենսի ինթերնեյշնլի» քարոզչության ֆինանսավորման մոնիթորինգի ծրագիրը և IFES-ի կողմից իրականացված ընտրողների իրազեկվածության ծրագիրը: Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է ընտրությունների համար իրավական օգնության ծրագիր:

21 Օրինակ, ապրիլի 27-ին Գյումրիում (Շիրակի մարզ) ՀՀԿ հանրահավաքի կազմակերպիչը ստուգել է մասնակցությունը՝ խնդրելով «Գազպրոմի» ներկա աշխատակիցներին բարձրացնել իրենց ձեռքերը: Նույն միջոցառման ժամանակ, Մշակութային հարաբերությունների Գյումրու վարչության պետը խոստացել է իր աշխատակազմի աջակցությունը ՀՀԿ-ին: Այդ հանրահավաքի որոշ մասնակիցներ տեղեկացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդին, որ իրենք «Գազպրոմի» աշխատակիցներ են, որոնց հանձնարարել են աշխատանքը շուտ լքել և գնալ ՀՀԿ-ի հանրահավաքին: Թալինում (Արագածոտնի մարզ) երկարաժամկետ դիտորդներն արձանագրել են, որ տեղական հարկային ծառայության աշխատակիցները քննարկել են այն, որ նրանք աշխատանքից շուտ են ազատ արձակվել՝ ՀՀԿ-ի հանրահավաքին մասնակցելու համար: Արմավիր մարզում մի գյուղում մի խումբ բնակիչներ, առանձին-առանձին տեղեկացրել են երկարաժամկետ դիտորդներին, որ իշխանությունները, գյուղապետը և ՀՀԿ-ն իրենց սպառնացել են զրկել աշխատանքից, եթե նրանք մասնակցեն նույն օրը կազմակերպվող Ժառանգության

հարցականի տակ է դնում, թե ինչ չափով են ընտրողներն ազատ եղել քննարկել և ուսումնասիրել բոլոր մասնակիցների տեսակետները, և քվեարկել՝ առանց հետագա պատժից վախենալու, ինչպես նախատեսված է ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությամբ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից արձանագրվել են Ընտրական օրենսգրքով արգելված վարչական ռեսուրսների չարաշահման որոշ դեպքեր:[22] Թեպետ Ընտրական օրենսգիրքն արգելում է ուսումնական ոլորտում աշխատողների կողմից քարոզչության և աշխատանքային պարտականությունների համատեղումը, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները դիտարկել են բազմաթիվ դեպքեր, երբ ՀՀԿ-ն ակտիվորեն ներառել է ուսուցիչներին և աշակերտներին քարոզչական միջոցառումներում, նաև դասերի ժամանակ:[23] Մի դեպքում, Լոռվա մարզում, ուսուցիչը և տեղական իշխանությունները խնդրել են ծնողներին մասնակցել ՀՀԿ միջոցառմանը: Երկարաժամկետ դիտորդները արձանագրել են ՀՀԿ քարոզչական նյութեր և կուսակցական դրոշակներ մի շարք դպրոցների շենքերի վրա:[24] Տեղական մակարդակով ՀՀԿ քարոզարշավն իրականացվել է դպրոցների տնօրենների ակտիվ մասնակցությամբ: Մի դեպքում, մասնավոր համալսարանի ռեկտորը դասերի ժամանակ խրախուսել է ներկաներին քվեարկել ՀՀԿ թեկնածուների օգտին:[25]

Վարչական ռեսուրսների չարաշահումը, այդ թվում ուսումնական ոլորտի աշխատակիցների մարդկային ռեսուրսը, խախտել է Ընտրական օրենսգրքի 18-րդ և 22-րդ հոդվածները: Դեռ ավելին, նման գործունեությունը նպաստել է մասնակիցների համար անհավասար մրցակցային դաշտի ապահովմանը՝ հակասելով ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությանը:

ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանին պատկանող «Մուլտիգրուպ» ընկերությունը

հանրահավաքին: Սյունիքի մարզում, գյուղապետերից մեկը ՀՀԿ կողմնակիցների և «կասկածելիների» ցուցակներ է կազմել՝ խնդրելով տեղի դպրոցի տնօրենին ստուգել դրանք: Դպրոցի տնօրենը հաստատել է այդ փաստը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդներին և ներկայացել որպես ՀՀԿ կողմնակից: Այգեշատ գյուղի (Արմավիրի մարզ) գյուղապետը տեղեկացրել է երկարաժամկետ դիտորդներին, որ ինքը հորդորել է ինքնաառաջադրված թեկնածուի համար քարոզչություն իրականացնողներին հեռանալ գյուղից, և որ ինքը աջակցում է ՀՀԿ-ի կողմից առաջադրված իր եղբորը:

22 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները արձանագրել են, երբ շտապ օգնության մեքենայով հայտարարել են Կապանում (Սյունիքի մարզ) կազմակերպվելիք ՀՀԿ հանրահավաքի մասին, Վանաձորի տեղական իշխանությանը պատկանող բեռնատար մեքենայով ՀՀԿ-ի դրոշակներ են ամրացվել փողոցային լուսավորության սյուներին և երեք դեպք, երբ համայնքի ղեկավարները քարոզել են ՀՀԿ-ի օգտին աշխատանքային ժամերի ընթացքում (Կոտայքի մարզ):

23 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդների կողմից ՀՀԿ հանրահավաքներին մասնակցելու համար ուսուցիչներին և ուսանողներին դասերից ազատելու կամ դասերից հետո հանրահավաքներին մասնակցելու խնդրանքների դեպքեր են արձանագրվել Չարենցավանում, Էջմիածնում, Հրազդանում, Նոր Հաճնում, Վարդենիսում, Վանաձորում և Երևանում:

24 Արմավիրի, Լոռվա և Շիրակի մարզերում արձանագրվել են ՀՀԿ պաստառներ փակցված դպրոցների շենքերին, որոնք նախատեսված են եղել որպես ընտրական տեղամասեր: ՀՀԿ դրոշակներ են դիտարկվել նաև Արմավիրի և Լոռվա մարզի մի շարք դպրոցների վրա:

25 Նմանատիպ դեպքեր են արձանագրվել Էջմիածնում և Վանաձորում (Լոռու մարզ):

քարոզարշավի ընթացքում մոտ 500 տրակտոր է բաժանել: Ծրագիրը միահյուսվել է ԲՀԿ քարոզարշավին:[26] Ընտրական օրենսգրքի 18.7 հոդվածը արգելում է ընտրությունների մասնակիցներին և նրանց հետ փոխկապակցված բարեգործական կազմակերպություններին, նախընտրական քարոզչության ժամանակ ընտրողներին տրամադրել կամ խոստանալ ապրանքներ և ծառայություններ: Այս հարցի վերաբերյալ բողոքին ի պատասխան, ԿԸՀ-ն որոշել է, որ օրենքի խախտում չկա: Այն հիմնավորել է իր որոշումը ԲՀԿ տրամադրած բացատրություններով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արձանագրել է նաև մի քանի դեպքեր, երբ ՀՀԿ թեկնածուները չեն հետևել սույն հոդվածի դրույթներին:[27]

Նոր Ընտրական օրենսգիրքը խստացրել է քարոզարշավի ֆինանսավորման կանոնները:[28] Այնուամենայնիվ, առկա են երկու հիմնական մտահոգություններ. վերահսկիչ-վերստուգիչ ծառայության սահմանափակ անկախությունը ԿԸՀ-ից, և ընտրական ծախսերի նեղ իրավական սահմանումը:[29] Մոտ 12 մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ չեն բացել քարոզարշավի համար հատուկ հաշվեհամարներ, իսկ 1 թեկնածու՝ նախքան քվեարկության օրը ծախսեր չի հայտարարագրել:[30] Մյուս բոլոր թեկնածուները հայտարարագրեր են ներկայացրել ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը, և որոնք, սահմանված ժամկետներում հրապարակվել են: Մինչև քվեարկության օրը քարոզչության ֆինանսավորման հետ կապված խախտումների ոչ մի դեպք չի գրանցվել ԿԸՀ-ի կողմից:

---

26 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները նկատել են տրակտորներ յոթ մարզերում՝ հաճախ փակցված ԲՀԿ քարոզչական նյութերով կամ ԲՀԿ մեծ պաստառի կողքին կանգնեցված: Տրակտորները նաև ցուցադրվել են հեռուստացույցով ԲՀԿ քաղաքական գովազդում:

27 Օրինակ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները նկատել են ցուցանակ (վերանորոգվող ճանապարհի երկայնքով), որը տեղեկացրել է, որ թիվ 38 ընտրատարածքի (Կապան, Սյունիքի մարզ) ՀՀԿ թեկնածուն ներգրավված է վերանորոգման ծրագրում, որը ֆինանսավորվում է Քաջարանի լեռնահանքային գործարանի կողմից. թեկնածուն այս գործարանի տնօրենի որդին է: Այս հարցի վերաբերյալ ՀԱԿ թեկնածուի ներկայացրած բողոքին ի պատասխան թիվ 38 ԸԸՀ-ն մերժել է բողոքը՝ հիմնավորելով, որ դա անօրինական գործունեություն չի: ԿԸՀ-ն հրաժարվել է քննել տվյալ ԸԸՀ-ի որոշման դեմ բերված բողոքը:

28 Մասնակիցները պետք է բացեին հատուկ հաշվեհամար, որի միջոցով պետք է հոսեն քարոզարշավի ֆինանսավորման բոլոր միջոցները: Հիմնադրամները կարող են կազմվել ընտրողների նվիրատվություններից, մասնակցի անձնական միջոցներից և կուսակցության նվիրատվություններից: Արտերկրյա և անանուն նվիրատվություններն արգելված են օրենքով: Օրենքով սահմանված է ծախսերի առավելագույն չափեր տարբեր ընտրակարգերի համար:

29 Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ կազմակերպչական ծախսերը, ինչպիսիք են առևտրային կազմակերպությունների ծառայությունները, քարոզչական գրասենյակները, տրանսպորտի և կապի ծախսերը, չեն դասվում որպես քարոզարշավի ֆինանսավորման ծախսեր: Տես՝ նաև Ընտրական օրենսգրքի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի միասնական իրավական փորձաքննությունը. http://www.osce.org.odihr/elections/84269 :

30 Ընտրական օրենսգրքի 25.1 հոդվածը պահանջում է բոլոր մասնակիցներից բացել հատուկ քարոզարշավի համար հաշվեհամարներ. Ինչևէ, ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը մեկնաբանում է այս դրույթը որպես ոչ պարտադիր այն մասնակիցների համար, ովքեր չեն պատրաստվում դրամ ծախսել քարոզչական գործունեության համար:

Լրատվամիջոցներ

Հայաստանում հեռուստատեսությունը տեղեկատվության ամենակարևոր աղբյուրն է: Տպագիր մամուլի շրջանառությունը սահմանափակված է քիչ տպաքանակով: Չնայած աննշան բովանդակային տարբերությանը, ապրիլի 8-ին մեկնարկած պաշտոնական քարոզարշավի ժամանակ հեռարձակողները մատչելի են եղել բոլոր խոշոր կուսակցությունների համար՝ ըստ այդմ հնարավորություն ընձեռելով ընտրողներին տեղեկանալու նրանց քաղաքական դիրքորոշման մասին: Սա թերևս բարելավում կարող է համարվել՝ պաշտոնական քարոզարշավին նախորդող ժամանակահատվածի համեմատ: Ընտրական օրենսգիրքը քարոզարշավի ընթացքում կարգավորում է ամբողջ լուսաբանումը՝ ներառելով պահանջներ նորությունների լուսաբանման, վճարովի գովազդների և անվճար եթերաժամանակի վերաբերյալ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկված լրատվամիջոցներն իրենց լրատվական հաղորդումներում իրականացրել են վեց խոշոր կուսակցությունների և դաշինքի լայնածավալ լուսաբանում:[31] Նրանք նաև ցուցադրել են կուսակցությունների ներկայացուցիչների և թեկնածուների հետ հարցազրույցներ, բայց միայն 19 բանավեճ: Յոթ դեպքում հրավիրվածներից մեկը կամ ավելին չեն ներկայացել նախատեսված բանավեճին: Մեծամասնական թեկնածուների լուսաբանումը սահմանափակ է եղել: Հանրային հեռարձակողը՝ *հանրային հեռուսատեսությունը և ռադիոն*, կուսակցություններին տրամադրել են անվճար և վճարովի եթերաժամանակ: Դիտարկված հեռարձակողները պահպանել են քարոզարշավի լռության վերաբերյալ դրույթները:

Հ1 հանրային հեռուստաընկերությունը իր նորություններում 20 տոկոս լուսաբանել է ՀՀԿ-ին, 19 տոկոս՝ ՀԱԿ-ին, 12 տոկոս՝ ՀՅԴ-ին, ՕԵԿ-ին, և Ժառանգությանը և 8 տոկոս՝ ԲՀԿ-ին: Նորությունների լուսաբանումը հիմնականում չեզոք բնույթ է կրել, սակայն որոշակի դրական երանգ է արձանագրվել ՀՀԿ-ի և ՕԵԿ-ի հանդեպ: *Հանրային ռադիոն* իր լուսաբանումը խոշոր կուսակցությունների միջև հիմնականում հավասարապես է բաշխել: Թեպետ օրենքը սահմանում է, որ պետական թերթերը պետք է անկողմնակալ լինեն, *Հայաստանի Հանրապետություն* օրաթերթն իր ծավալի 24 տոկոսը տրամադրել է ՀՀԿ-ին՝ հիմնականում չեզոք կամ դրական երանգով, 12 տոկոս՝ պետական պաշտոնյաներին և 5 տոկոս՝ Նախագահին՝ իր պաշտոնական լիազորությունների շրջանակում:

Դիտարկված մասնավոր հեռարձակողները ցուցաբերել են որոշակի քաղաքական տարանջատում: *Կենտրոն Հ/Ը*-ն աջակցել է ԲՀԿ-ին, իսկ *Երկիր Մեդիան*՝ ՀՅԴ-ին և ԲՀԿ-ին:

---

31 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն դիտարկել է վեց ազգային հեռուստաալիքների քաղաքական և ընտրություններին առնչվող լուսաբանումը հիմնական եթերաժամի (փրայմ-թայմ 18:00-24:00) ընթացքում. *Հ1* (հանրային հեռուստատեսություն), *Հ2, Արմենիա Հ/Ը, Շանթ Հ/Ը, Երկիր Մեդիա, Կենտրոն Հ/Ը,* երկու ռադիոկայան՝ *Հանրային ռադիոն և Ազատ Եվրոպա/ազատություն ռադիոն* և *Հայաստանի Հանրապետություն* պետական օրաթերթը:

Հ2-ը, Արմենիա Հ/Ը-ն և *Շանթ Հ/Ը-ն* իրականացրել են խոշոր կուսակցությունների անկողմնակալ լուսաբանում, բայց առավել դրական երանգով է ներկայացվել ՀՀԿ-ն (*Հ2, Արմենիա Հ/Ը, և Շանթ Հ/Ը*), ՕԵԿ՝ (*Հ2*), ԲՀԿ՝ (*Շանթ Հ/Ը)* և ՀԱԿ՝(*Շանթ Հ/Ը*): *Ազատ Եվրոպա/ազատություն ռադիոկայանն* առավել բացասական երանգով է արտահայտվել ՀՀԿ-ի հանդեպ:[32]

Օրենքի համաձայն, ապրիլի 17-ին և 27-ին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) հրապարակել է լրատվամիջոցների դիտարկման իր երկու զեկույցները: Այս զեկույցներում նշված չէ Ընտրական օրենսգրքի որևէ խախտում, սակայն ՀՌԱՀ-ն պաշտոնական նամակներ է ուղարկել չորս հեռուստաընկերությունների՝ նշելով հեռուստաալիքների լուսաբանումների ժամանակ կողմնակալության մասին:[33]

Որոշ դեպքերում հեռուստաալիքները, սեփական նյութերի վրա հիմնվելու փոխարեն, իրենց նորությունների հեռարձակման ընթացքում օգտագործել են նույն քարոզչական նյութը, որն օգտագործվել է նաև քաղաքական գովազդում:[34] Նման գործելաոճը վնասում է լրատվական հաղորդման արժանահավատությանը և նվազեցնում է լրատվամիջոցի անկախությունը քաղաքական դաշտից, և կարող է ապակողմնորոշիչ լինել դիտողների համար:

Դիմումներ և բողոքներ

Այն եղանակը, որով ընտրական հանձնաժողովները և դատարանները քննարկել են ընտրություններին առնչվող բողոքները, հաճախ շահագրգիռ անձանց թողել են առանց իրենց բողոքների արդյունավետ քննության՝ հակասելով ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությանը, ինչպես նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածին:[35] Ընտրական հանձնաժողովները և

32 *Կենտրոն Հ/Ը-ն* առավել դրական լուսաբանման 48 տոկոս հատկացրել է ԲՀԿ-ին (հիմնականում դրական): *Երկիր Մեդիան* լուսաբանման 27 տոկոս հատկացրել է ՀՅԴ-ին (հաճախ դրական) և 16 տոկոս՝ ԲՀԿ-ին (հաճախ դրական): *Հ2-ը* լուսաբանման 19 տոկոս հատկացրել է ՀՀԿ-ին (հաճախ դրական), 18 տոկոս՝ ԲՀԿ-ին և 12 տոկոս՝ՕԵԿ-ին: *Արմենիա Հ/Ը* լուսաբանման 23 տոկոս հատկացրել է Ժառանգությանը, 20 տոկոս դրական լուսաբանում՝ ՀՀԿ-ին (հաճախ դրական) և 17 տոկոս՝ ՀԱԿ-ին: *Շանթ Հ/Ը-ն* լուսաբանման 21 տոկոս հատկացրել է Ժառանգությանը, 19 տոկոս դրական լուսաբանում՝ ՀՀԿ-ին (հաճախ դրական), 12 տոկոս՝ ՀԱԿ-ին (երբեմն դրական) և 14 տոկոս՝ ԲՀԿ-ին (հիմնականում դրական): *Ազատ Եվրոպա/ազատություն ռադիոկայանը* լուսաբանել է բոլոր խոշոր կուսակցություններին, գերակշռողը՝ ՀՀԿ-ին (26 տոկոս՝ երբեմն բացասական երանգով):

33 ՀՌԱՀ-ի՝ լրատվամիջոցների դիտարկման վերջին երրորդ զեկույցը կհրապարակվի մայիսի 10-ին: Այդ զեկույցը կներառի ամբողջ քարոզարշավի լուսաբանման գնահատականը:

34 ԲՀԿ-ի նույն քարոզչական նյութը հեռարձակվել է ապրիլի 8-ին *Կենտրոն Հ/Ը-ով* և ապրիլի 9-ին *Շանթ Հ/Ը-ով*, *Կենտրոն Հ/Ը-ով* և *Երկիր Մեդիայով*՝ ապրիլի 13-ին և *Կենտրոն Հ/Ը-ով* և *Շանթ Հ/Ը-ով*՝ ապրիլի 14-ին և 19-ին, *Կենտրոն Հ/Ը-ով*՝ ապրիլի 20-ին: Ապրիլի 19-ին *Հ2-ը* և *Արմենիա Հ/Ը*-ն հեռարձակել են նույն լուրը ՀՀԿ մեծամասնական թեկնածուի քարոզչական միջոցառման վերաբերյալ:

35 ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությանը սահմանում է «վարչական որոշումների դեմ արդյունավետ բողոքարկման այնպիսի միջոցներ, որոնք կերաշխավորեն

դատարանները հիմնականում որդեգրել են խիստ ձևական մոտեցում բողոքներն ուսումնասիրելիս: Բողոք բերելու և առաջին ատյանի դատարանի որոշումները բողոքարկելու սահմանափակ իրավունքը գումարվում են ընտրական բողոքների արդյունավետ լուծման բացակայությանը: Ի լրումն, դիմումների և բողոքների իրավական բովանդակությունը բավական խրթին է:

Համեմատած քիչ թվով պաշտոնական բողոքներ են ներկայացվել համապատասխան մարմիններին, չնայած մեծ թվով ոչ պաշտոնական բողոքների մասին է բարձրաձայնվել: Տարբեր շահագրգիռ անձինք ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին իրենց անվստահությունն են հայտնել ընտրական գործընթացների կազմակերպման, դատարանների և իրավապահ մարմինների կողմից ընտրություններին առնչվող բողոքներո անաչառ և արդյունավետ լուծելու վերաբերյալ, և որ հասարակական երկմտանք կա ընտրական իրավախախտումները հայտնելու հետ կապված: Ակնհայտ է եղել նաև բողոքարկման գործընթացների վերաբերյալ գիտելիքների պակասը:

Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս ընտրական հանձնաժողով, իսկ ԿԸՀ-ի դեմ բոլոր բողոքները Վարչական դատարանի ընդատությանը տակ են:[36] Դիմողները իրենց ընտրությամբ կարող են միանգամից դիմել Վարչական դատարան, առաջացնելով վերադաս հանձնաժողովի հետ իրավասությունների համընկնում: Ընտրությունների արդյունքների վերաբերյալ բողոքները բացառապես Սահմանադրական դատարանի իրավասության ներքո են: Նոր Ընտրական օրենսգրքի դրական հատկանիշներից է այն պահանջը, որ ընտրական հաձնաժողովների կողմից բողոքների քննարկման ժամանակ պետք է իրականացվի պատշաճ վարչական վարույթ: Ինչևէ, Ընտրական օրենսգիրքն անհիմն սահմանափակում է բողոք ներկայացնելու նրանց իրավունքը, ում անձնական ընտրական իրավունքները վտանգված են, ըստ էության, մերժելով ընտրողի՝ հիմնական ընտրական իրավունքների խախտման համար դատական պաշտպանություն ստանալու իրավունքը,[37] և ընտրական իրավուքների վերաբերյալ դատարանի որոշումները բողոքարկման ենթակա չեն:

հիմնարար իրավունքների պաշտպանությունը և կապահովեն իրավական ամբողջականությունը» յուրաքանչյուրի իրավունքը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք իրավասու ազգային դատարանի կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք ունի, այն արարքներից, որոնք խախտում են սահմանադրությամբ կամ օրենքներով իրեն շնորհված հիմնարար իրավունքները». Տես՝ http://www.un.org/en/documents/udhr/index.shtml :

36 Վարչական դատավարության օրենսգրքի 146.2 հոդվածը սահմանում է, որ ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված հայցադիմումները չեն կարող ներկայացվել նախքան նախընտրական քարոզչության պաշտոնապես սկսվելը: Մի գործով Վարչական դատարանը որոշել է, որ Ընտրական օրենսգրքի քարոզարշավը կարգավորող նորմերը չեն կիրառվում նախքան քարոզարշավի պաշտոնական մեկնարկը:

37 Ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նշվում է, որ յուրաքանչյուր ոք կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել է իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը կամ դիտորդը՝ եթե գտնում է, որ խախտվել են որպես դիտորդի իր իրավունքները:

Քվեարկության օրվանից առաջ ԿԸՀ-ն ստացել է մոտ 494 դիմում: Դրանց գերակշռող մասը (461) ներկայացվել է միևնույն անձի կողմից, որոնք հինականում վերաբերվել են որպես թեկնածուներ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից քարոզչություն իրականացնելուն և լրատվության անհամաչափ լուսաբանմանը:[38] ԿԸՀ-ն մերժել է այս բողոքների քննությունը՝ հիմնավորելով, որ անհատ անձինք նման բողոքներ բերելու իրավունք չունեն: Միևնույն ժամանակ ԿԸՀ-ն ուսումնասիրել է այս դիմումներում ներկայացված որոշ փաստեր և խախտումներ չի հայտնաբերել: Գրեթե բոլոր մյուս դիմումների քննությունը ԿԸՀ-ի կողմից մերժվել է ձևական հիմքերով կամ հաճախ մերժվել է առանց բողոքի էության կամ ապացույցների պատշաճ ուսումնասիրության: Որոշ որոշումներում բացակայել է պատշաճ իրավական հիմքը:[39]

Քվեարկության օրվանից առաջ 30 բողոք է ներկայացվել ԸԸՀ-ներին, որոնք հիմնականում առնչվել են քարոզչության կանոնների խախտումներին, ներառյալ ձայների գնում, քարոզչություն դպրոցներում և պաստառների վերաբերյալ կանոնների խախտում: Գործերի մեծ մասը պատշաճ կերպով չի քննարկվել: Որոշ դեպքերում նախազգուշացումներ են տրվել թեկնածուներին՝ պաստառների վերաբերյալ նորմերը խախտելու համար: Մի քանի թեկնածու դիմում են ներկայացրել, որպեսզի, ընտրական իրավախախտումներ թույլ տված այլ թեկնածուի գրանցումը ուժը կորցրած ճանաչվի,[40] բայց դրանցից ոչ մեկը չի բավարարվել: Թիվ 19 և 23 ԸԸՀ-ները որոշումներ են ընդունել, ըստ որոնց տնօրեններին և ուսուցիչներին արգելված չէ քարոզչություն անել դպրոցներում, ինչը Ընտրական օրենսգրքի անհիմն նեղ մեկնաբանություն է:[41] ԿԸՀ-ն ոչ մի միջոց չի ձեռնարկել այս խնդիրը քննարկելու համար, սակայն մի բողոքի վերաբերյալ այն որոշել է, որ դպրոցներում քարոզչական շտաբներ բացելը արգելված չէ: Վարչական դատարանը անփոփոխ է թողել թիվ 23 ԸԸՀ-ի որոշումը:

Թեկնածուների գրանցման վերաբերյալ չորս գործեր ներկայացվել են Վարչական դատարան: Թեկնածուն, ում գրանցումը մերժել է և մեծամասնական (10-րդ ընտրատարածք), և համամասնական ընտրակարգով, բողոքել է, որ ԱՎՎ-ն անհիմն մերժել է իրեն հինգ տարվա մշտական բնակության վկայագիր տալ, և արդյունքում թե ԸԸՀ-ն, թե ԿԸՀ-ն ոչ իրավաչափ կերպով մերժել են իր գրանցումը: Երկու մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ (թիվ 19 և 37 ընտրատարածքներում) բողոքել են, որ իրենց հակառակորդներո անօրինական կերպով են գրանցվել՝ չհամապատասխանելով հինգ տարվա մշտական բնակության պահանջին: Դատարանը

38 Ընտրական օրենսգիրքը հստակ չի սահմանում, թե որ մարմինն է, ԿԸՀ թե ՀՌԱՀ, իրավասու քննելու ընտրություններին առնչվող լրատվամիջոցների դեմ բողոքները, երկու մարմիններն էլ իրենց իրավասու են համարում:

39 Օրինակ, ԿԸՀ-ն որոշել է, որ կուսակցական դրոշակներ ամրացնելը կարգավորված չի, քանի որ դրանք քարոզչական պաստառներ չեն (որոնք չեն կարող փակցվել որոշակի վայրերում, օրինակ հասարակական տրանսպորտ և պետական կառույցների շենքերին):

40 Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ ընտրական խախտումների համար միակ պատժամիջոցներն են նախազգուշացումը և գրանցումը ուժը կորցրած ճանաչելը:

41 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4.8 հոդվածը սահմանում է, որ «Ուսումնական հաստատություններում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն»:

մերժել է ԿԸՀ և ԸԸՀ դեմ բոլոր չորս գործերը ձևական հիմքերով՝ առանց բուն խնդրի ուսումնասիրության, թե արդյոք մշտական բնակության պահանջը իրավականորեն բավարարված է եղել:[42] Քվեարկության օրվանից առաջ 22 բողոք է ներկայացվել Վարչական դատարան: Գրեթե բոլորի քննությունը մերժվել է կամ մերժվել՝ ձևական հիմքերով, առանց բողոքի բուն էությունը քննելու կամ առանց լուրջ իրավական հիմքի:

Տեղական և միջազգային դիտորդներ

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է ընտրությունների տեղական և միջազգային դիտարկում: ԿԸՀ-ն հավատարմագրել է դիտորդներ 10 միջազգային կազմակերպություններից և ավելի քան 27,141 դիտորդ 54 տեղական ՀԿ-ներից:[43] Հավատարմագրման գործընթացն ընդհանուր առմամբ ամբողջական է եղել, սակայն օրենքի պահանջների նեղ և բառացի մեկնաբանության որոշ դեպքեր հանգեցրել են 10 տեղական կազմակերպությունների հավատարմագրումը մերժելուն: 4,310 տեղական ՀԿ-ների դիտորդներ չեն կարողացել հանձնել ԿԸՀ պարտադիր ստուգարքը կամ որոշել են այն չհանձնել և հետևաբար չեն կարող դիտարկել: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցները պարբերաբար իրենց մտահոգությունն են հայտնել տեղական դիտորդների պարտադիր հավատարմագրման վերաբերյալ, մի խնդիր, որը նախկինում բարձրացվել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի և կողմից:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել նախկին Ընտրական օրենսգրքի 30.6 հոդվածը հանելու վերաբերյալ, որը դիտորդներին քրեական հետապնդումից անձեռնմխելիություն էր շնորհում՝ ընտրական գործընթացների վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտելու համար: Ինչևէ, այս մտահոգությունների պատասխանը եղել է 2010 թվականին Քրեական օրենսգրքից զրպարտության դրույթների հանելը:

Ընտրությունների օր

Քվեարկության օրը, ընդհանուր առմամբ, հանգիստ և խաղաղ էր: ԿԸՀ-ն հայտարարել է քվեարկության նախնական արդյունքների 62 տոկոսը: Ժամը 1:30-ից սկսած, ԿԸՀ-ն սկսել է իր կայքում հրապարակել համամասնական ընտրակարգով ընտրությունների նախնական արդյունքների՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալները,

---

42 Դատարանը պնդել է, որ այն իրավասություն չունի քննելու բողոքների բուն էությունը, քանի որ հայցվորները իրենց բողոքը ներկայացրել էլ ԱՎՎ-ի հավաստագրի տրման/հետ կանչման և ԸԸՀ-ի և ԿԸՀ-ի որոշումների, այլ ոչ թե ԱՎՎ-ի հավաստագիր տալուն և հետ կանչելուն ուղղված գործողությունների դեմ: Երբ մի հայցվոր, հաջորդիվ հայց է ներկայացրել ԱՎՎ գործողությունների դեմ, դատարանը մերժել է հայցի քննությունը՝ ընտրական իրավունքների պաշտպանության համար հայց ներկայացնելու եռօրյա ժամկետը խախտելու պատճառաբանությամբ:

43 Կուսակցությունների վստահված անձանց համար ԸԸՀ-ները յուրաքանչյուր մասնակցի և ընտրական տեղամասի թվով թողարկել են երեք չլրացված հավաստագիր, որոնք հետո բաժանվել են մասնակիցներին: Վստահված անձինք հավատարմագրման կարիք չունեն, և նրանց անունները չեն գրանցված համապատասխան ընտրական մարմիններում:

ինչը նպաստել է արդյունքների ամփոփման ընթացքի թափանցիկությանը:

Այն դեպքում, երբ բացման գործընթացները դրական են գնահատվել դիտարկված գրեթե բոլոր ընտրական տեղամասերում, քվեարկության ընթացքը բացասաբար է գնահատվել ավելի քան 10 տոկոսում, ինչը զգալի է: Դիտարկված ընտրական տեղամասերից զգալի մեծ մասում քվեարկության գործընթացը կանոնակարգված և լավ կազմակերպված է եղել, սակայն, կազմակերպչական խնդիրներ, գործընթացի անհարկի միջամտության և լուրջ խախտումների դեպքեր են դիտարկվել բավական մեծ թվով ընտրական տեղամասերում: Այցելած ընտրական տեղամասերից 8 տոկոսում դրսում առկա են եղել քարոզչական նյութեր:

Դիտարկված ընտրական տեղամասերից 15 տոկոսում կազմակերպվածության բացակայությունը կամ ՏԸՀ անդամների և կուսակցությունների/թեկնածուների վստահված անձանց կամ դիտորդների միջև ծագած վեճերը բացասաբար են ազդել ընտրական գործընթացի վրա: Միջազգային դիտորդներն արձանագրել են մարդկանց կուտակումներ դիտարկված ընտրական տեղամասերից 16 տոկոսում, դրսում ընտրելու սպասող մեծ խմբեր՝ 15 տոկոսում և լարվածություն կամ անհանգստություն՝ 6 տոկոսում: Գրեթե բոլոր դիտարկված ընտրական տեղամասերում ներկա են եղել վստահված անձինք, իսկ տեղական դիտորդներ՝ 87 տոկոս ընտրական տեղամասերում: Դիտարկված ՏԸՀ-ներից 12 տոկոսում, համապատասխան իրավասություն չունեցող անձինք, հիմնականում վստահված անձինք, միջամտել են կամ ուղղորդել են ՏԸՀ աշխատանքները: Միջազգային դիտորդներն արձանագրել են որոշ անձանց կողմից ընտրողների ընտրության վրա ազդելու փորձերի (դիտարկված 4 տոկոս ընտրական տեղամասերում), ինչպես նաև ընտրողներին վախեցնելու դեպքեր (2 տոկոս): Քվեարկության օրը ձայների գնման պնդումների վերաբերյալ հայտարարություններ են ներկայացվել Ոստիկանություն, և մի քանի քրեական գործեր են հարուցվել:

Միջազգային դիտորդներն արձանագրել են մի շարք լուրջ խախտումներ, ներառյալ խմբակային ընտրություն (12 տոկոս դիտարկված ընտրական տեղամասերում), վստահված անձանց կողմից ընտրություն (4 տոկոս), բազմակի ընտրության (2 տոկոս) և ընտրողների ցուցակներում մի շարք նույնանման ստորագրությունների առկայության (2 տոկոս) դեպքեր: Դիտարկված ընտրական տեղամասերից 7 տոկոսում ընտրատուփերը պատշաճ կարգով կնքված չեն եղել դիտարկման ժամանակ: Ընտրության գաղտնիությունը ոչ միշտ է ապահովվել, քանի որ ոչ բոլոր ընտրողներն են գաղտնի նշում կատարել իրենց քվեաթերթիկների վրա (12 տոկոս) կամ նախքան ընտրախցից դուրս գալը դրանք ծրարի մեջ դրել (13 տոկոս):Միջազգային դիտորդները դեպքեր են արձանագրել, երբ վստահված անձանց կամ լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից տեսանկարահանումը խախտել է ընտրության գաղտնիությունը: Ընտրողների անձերի ստուգման ընթացակարգերը հիմնականում պահպանվել են, դիտարկված ընտրական տեղամասերից 3 տոկոսում ընտրողներին թույլ չեն տվել քվեարկել, քանի որ նրանց անունները ընտրացուցակում չեն եղել: ԿԸՀ տվյալների համաձայն, քվեարկության օրը լրացուցիչ ընտրացուցակներում ավելացված անձանց թիվը շատ քիչ է եղել:

Ընտրողների անձնագրերում դրվող հատուկ կնիքի թանաքը (բազմակի ընտրության դեմ երաշխիք) պետք է տեսանելի լիներ 12 ժամ, բայց անցել է շատ ավելի շուտ: Որպես ԿԸՀ-ի, որը նախապես չէր ստուգել թանաքը, և ԸԸՀ-ների կողմից տրված հակասական ուղղորդումների արդյունք, ՏԸՀ-ները շարունակել են օգտագործել ցնդող թանաքը, մինչդեռ մյուսները օգտագործել են ընտրական ծրարները կնքելու համար նախատեսված թանաքը կամ երկու տիպի թանաքներն էլ՝ խառը:

Միջազգային դիտորդների կողմից դիտարկված ընտրական տեղամասերում կանայք 32 տոկոսում եղել են ՏԸՀ նախագահ և 44 տոկոսում՝ ՏԸՀ անդամ:

Դիտարկված ընտրական տեղամասերից գրեթե մեկ հինգերորդում ձայների հաշվարկման գործընթացը բացասաբար է գնահատվել: Որոշ ՏԸՀ-ներ անմիջապես քվեարկության ավարտից հետո չեն սկսել ձայների հաշվարկը կամ չեն իրականացրել օրենքով պահանջվող ստուգիչ գործողություններ, ինչպես օրինակ, ընտրացուցակում ընտրողների ստորագրությունները հաշվելը: Քիչ թվով ՏԸՀ-ներ են հաշվարկն իրականացրել ոչ թափանցիկ եղանակով: Դիտարկված ձայների հավարկի չորս դեպքերից մեկում իրավասություն չունեցող անձինք են մասնակցել: Միջազգային դիտորդները արձանագրել են լուրջ խախտումների մասնակի դեպքեր, ինպես օրինակ, արդյունքների կամ արձանագրության կեղծում (4 դեպք) կամ նկատել են, որ ընտրատուփերը նախապես լցոնվել են (5 դեպք): Արդյունքները արձանագրություններում հաճախ չեն ստուգվել, երեքից մեկ ՏԸՀ-ում արձանագրությունը լրացնելու հետ կապված խնդիր է եղել և չորսից մեկ ՏԸՀ-ն չի հրապարակել արձանագրությունների պատճենները՝ հասարակական ստուգման համար:

Քվեարկության գիշերը միջազգային դիտորդների կողմից դիտարկված 41 ԸԸՀ-ներից 33-ում արդյունքների ամփոփման գործընթացը դրական է գնահատվել: Չնայած գրեթե բոլոր ԸԸՀ-ներում գործընթացը եղել է թափանցիկ, շատ ԸԸՀ-ների տարածքներ եղել են մարդկանցով գերլցված և ՏԸՀ արձանագրությունները ստանալու և մշակելու համար ոչ համապատասխան: Միջազգային դիտորդներն արձանագրել են, որ շատ ՏԸՀ-ներ արդյունքների արձանագրությունները ամբողջությամբ լրացված չեն եղել և հաճախ ԸԸՀ-ները ստիպված են եղել ուղղել թվաբանական սխալները (օրենքի համաձայն): Արձանագրվել են արդյունքների վերաբերյալ տվյալների մշակման հետ կապված խնդիրների մի քանի դեպքեր:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, 7 մայիսի, 2012թ. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելությունը սկսել է իր աշխատանքները Երևանում մարտի 22-ից: Այն ներառում է 17 մասնագետներ մայրաքաղաքում և 24 երկարաժամկետ դիտորդներ՝ տեղակայված ամբողջ Հայաստանով:

Ընտրությունների օրը 349 կարճաժամկետ դիտորդներ են տեղակայվել, այդ թվում, 60 անդամ ԵԱՀԿ ԽՎ պատվիրակությունից, 25 անդամ ԵԽԽՎ պատվիրակությունից, 10 անդամ ԵԽ պատվիրակությունից: ընդհանուր առմամբ դիտորդներ են եղել ԵԱՀԿ 42 անդամ երկրներից: Ընտրությունները դիտարկվել են ընդհանուր 1,982 ընտրական տեղամասերից ավելի քան 1000-ում: Ձայների հաշվարկումը դիտարկվել է բոլոր ընտրատարածքներից 102 ընտրական տեղամասերում: Արդյունքների ամփոփումը դիտարկվել է բոլոր 41 ԸԸՀ-ներում:

Դիտորդները շնորհակալություն են հայտնում Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ ընտրությունները դիտարկելու հրավերի համար, Կերտրոնական Ընտրական Հանձնաժողովին՝ իր համագործակցության և հավատարմագրման փաստաթղթերը տրամադրելու, Արտաքին գործերի նախարարությանը և այլ պետական մարմիններին իրենց աջակցության և համագործակցության համար: Դիտորդներն իրենց գնահատանքն են հայտնում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակին, Հայաստանում հավատարմագրված դեսպանություններին և միջազգային կազմակերպություններին իրենց համագործակցության համար:

Հետագա տեղեկատվության համար խնդրում ենք դիմել.

- Տկն. Ռադմիլա Շեկերինսկա՝ Երևանում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ ղեկավար (+ 374-10-545 922)
- Պրն. Թոմաս Ռիմեր՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ներկայացուցիչ (+48-609-522 266) կամ Պրն. Ռաուլ Մուրեզան՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների խորհրդատու Վարշավայում (+48-22-520 0669)
- Նելլի Սիմոն, հասարակայնության հետ կապերի ղեկավար ԵԱՀԿ ԽՎ, Կոպենհագենում (+45-60108380)
- Թինա Շեոն, Գլխավոր քարտուղարի տեղակալ, ԵԱՀԿ ԽՎ, Կոպենհագենում (+45-40304985)
- Բոգդան Տորկատուրի. ԵԽԽՎ միջխորհրդարանական համագործակցություն և ընտրությունների դիտարկում, Հայաստանում (+374-9835387), Ստրասբուրգում (+33 388 413 282)
- Էմիլյա Գալլեգո Պերոնա ԵԽ (+374 96 697903 կամ +32 4989 81364) էլ.փոստ: gallego@europarl.europa.eu

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ հասցե:
Բաղրամյան 18, 0010 Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռախոս: +374-10-545 922
Ֆաքս: +374-10-545 916
Էլ-հասցե: office@odihr.am
Կայք: www.osce.org/odihr/elections/armenia/2012